ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----- հունիսի 2025 թվականի №—-Ա

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն-ները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու հայտ (այսուհետ՝ Հայտ), որի համաձայն՝ «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը մտադիր է ձեռք բերել Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնետոմսերը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն ուղղված Հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 12-ի № ՄՄ/34.2-Մ2-9/2097-2025 գրությանն ի պատասխան վերջինս 2025 թվականի հունիսի 26-ի №01/11.1/5303-2025 գրությամբ հայտնել է, որ գործարքի կնքման վերաբերյալ իր իրավասությունների շրջանակում առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով Հայտի առնչությամբ ազգային անվտանգության շահերին սպառնալու տեսանկյունից առարկություններ չունենալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը,

գ) Հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքի կնքման համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնետոմսերը «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառելու գործարքի կնքմանը:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի (պայմանագրերի) պատճենը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ.ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- հունիսի 2025 թ.